

ամենայն զարդիւք, երկրպագեալ սուրբ Խա-  
 145 չին եւ էառ յաջ ձեռն ի վերայ ձիուն զպար-  
 ծանքն Պօղոսի՝ դայր նախ ինքն եւ ապամայրն  
 զկնի. եւ այսպէս մեծաշուք փառօք մտին ի  
 քաղաքն եւ անդ հանդուցին զսուրբ Նշանն եւ  
 շինեցին ի վերայ զեկեղեցիս, ի փառս սուրբ  
 150 Խաչին. եւ կոչեցին Սուրբ Խաչ. եւ է անդ  
 մինչեւ ցայսօր. զոր եւ մեք արժանի եղեալ  
 բաց աչօք տեսոյ նորա՝ աղօթեալ մեղաց թո-  
 դութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ  
 ամենայն արեան մերձաւորաց եւ երախտաւո-  
 155 բաց :

Եւ այսպէս սահմանք է որ ամէն ուխտա-  
 ւոր զայս եօթն եկեղեցիքս պիտոր քայլեն, զի  
 սոքա են մեծ եւ աւազ. իրեքն ի քաղաքն եւ  
 չորս ի դուրս. բայց բոկ ստամբ եւ հետիոտս,  
 160 մեծաւ զղջմամբ եւ հառաչանօք: Բայց իշ-  
 խանք եւ մեծամեծք ձիօք, ջորօք եւ կառօք  
 չրջին եւ սոցա ճանապարհն ԺԼ մղոն է:

#### DOMINE QUO VADIS

Եւ տեսաք եկեղեցի մի ալ վիմաշէն հին,  
 նման Երուսաղէմայ սուրբ Յարութեանն, Հե-  
 165 զինէ շինած. եւ մերձ ի դուռն քաղքին մա-  
 տուռ մի տեսաք փոքրիկ, որ զԲրիստոս ընդ  
 Պետրոսի քանդակած էր, իբր թէ զրոյց տային  
 միմիանց. եւ ասին թէ այս այն տեղն է, որ  
 Բրիստոս Պետրոսի հանդիպեցաւ յորժամ  
 170 փախչէր երկուցեալ ի Խաչէն. եւ տեսեալ

154 յարեան: — 158 յաւազ: — 160 հառաջանօք:  
 — 164 յԵրուսաղէմա: — 167 պետրոս քանդած: